ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում նմանը չտեսնված հայկական չարդերի հետևանքով Հայ ժողովրդի մնացորդները մազապուրծ փախան Թյուրքահայաստանից և ապաստան որոնեցին Մերձավոր Արևելքի և Եվրոպայի այլ և այլ վայրերում... Հայաստանը ամայացավ:

Այն օրից Հայ ժողովրդի մի ստվար հատվածը գաղթականի ցուպը ձեռին, տառապալից կյանք վարելով, թափառում է երկրե-երկիր, հարմար տեղ որոնելով ժամանակավորապես ծվարելու համար: Սակայն միշտ հուսալից՝ թե երբևիցե պիտի դառնա իր հայրենի երկիրը՝ Սովետական Հայաստան, հագեցնելու իր կարոտակեզ հոգին:

Սովետական մեծ և հզոր պետությունը, որ բաղաքականապես ծնունդ առած օրից ազնիվ և մարդասեր ոգի է ցուցաբերել, փոքր ազգերի և պետությունների իրավունքները է պաշտպանել, անտարբեր չէր կարող մնալ գաղութահայ ժողովրդի տառապալից կյանքը տեսնելով:

Սովետական կենտրոնական իշխանությունը Հայաստանի կառավարության միջնորդության հետևանքով, տարվույս դեկտեմբերի 2-ին հրապարակեց մի օրենք, որով թույլատրվում է գաղութահայ ժողովրդին գալ Սովետական Հայաստան, որպեսզի վերջ տրվի նորա տառապալից կյանքին և հնարավորություն ստեղծվի իր եղբայրների հետ միասին խաղաղ ապրելու, միասին աշխատելու և միասին զարգացնելու հայ մշակույթը:

Գաղութահայությունը վաղուց սպասում էր, որ բացվեր իր ներգաղթի համար դեպի Հայաստան: 1941 թվից Մեր ստացած բազմաթիվ գրությունները ու պաշտոնական անձանց բանավոր հայտարարությունները այդ են ապացուցանում: Այսօր, երբ ներգաղթի հարցը սրտաբաց ու լայն մասշտաբով է դրված՝ տեղի Հայ Հոգևորականությունը բարոյական պարտականություն ունի բացատրել իր հոտին հարցի ներկա վիճակը և նորա շտապ կազմակերպման անհրաժեշտությունը և իր ոգևորիչ քարոզներով անմար պահել հայ ժողովրդի ոգևորությունը: Նույն պարտականությունը ծանրանում է նաև հայ ինտելիգենցիայի և մամուլի վրա:

Սովետական Հայաստանում կազմակերպված ներգաղթի կոմիտեն հրահանգել է տեղերում կոմիտեներ կազմակերպել, որպեսզի ներգաղթը կանոնավոր, արագ և հաջող կատարվի: Հատկապես Առաջնորդներիդ վերա բարոյական պարտականություն կա Ձեր հեղինակությամբ, հարտար լեզվով և ազդու խոսքով՝ աջակցելու հիշյալ կոմիտեների հաջող կազմակերպմանը, առաջ քաշելով հեղինակավոր, գործունյա և ներգաղթի գաղափարին նվիրված անձանց: Եվ այս առթիվ Ձեր կատարած աշխատանքների մասին անմիջապես Մեզ զեկուցանել, որպեսզի գործն ընթացք ստանա և պետական խնամակալության հանձնվի:

Այս գործում Ձեզ իբրև խորհրդակից՝ մեծապես կարող են օգտակար լինել թեմական խորհուրդն և պատգամավորական ժողովը:

Հայ կառավարությունը ըստ ամենայնի ընդառաջում է ներգաղթի հաջող լուծման:

Այս նպատակով Հայաստանում կազմակերպված է ներգաղթի կոմիտե, որը խորհում է ներգաղթող ժողովրդին փոխադրել, երկրում տեղավորման դյուրություններ տալ և նորա ապրուստի մասին հոգալ, որպեսզի եկողները զոհ սրտով, խաղաղ և ապահով ապրեն և հային հատուկ բռնաջան աշխատանքով մասնակցեն տեղի կուլտուրական բարձր տնտեսության: Սակայն և նույնքան անհրաժեշտ է հայ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԿԵՆԱՍՆԵՐԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ, որոնք միշտ էլ սիրով և առատաձեռնությամբ մասնակցել են նման դեպքերում: Ս. Էջմիածինն էլ չի զլանա իր ամենատեսակ աջակցությունը ներգաղթի սուրբ գործին՝ իր ձեռքն եղած ամենատեսակ միջոցներով:

Աստվածային օրհնությունն ենք հայցում Սովետական կենտրոնական իշխանության և մանավանդ ժողովուրդների հայր՝ Մեծ ՍՏԱԼԻՆԻ վերա, նորա մարդասեր օրենքի տուչության համար: Մաղթենք, որ Տերը վարձահատույց լինի փոխարենը:

Ամենակարողի օրհնությունն ենք հայցում Սովետական Հայաստանի Հանրապետության և նորա ղեկավարների վերա, որ զորացնի նոցա նույն հայրենասիրական և ժողովրդական եռանդուն ոգով գործելու, ինչպես ցարդ:

Ամենաբարձրյալի օրհնությունն ենք հայցում այս մեծ և սուրբ գործի վերա և աղոթում Ձեր ձեռնարկի հաջողության համար:

Ամենակալի Աջը թո՛ղ պահապան և հովանի լինի հայ ժողովրդի վերա, որ նա հաջողությամբ և ապահով դառնա իր հայրենի երկիրը՝ Սովետական Հայաստան և իր կարոտակեզ հոգին հագեցնե:

Շնորհք և ողորմություն Տյառն Մերո Հիսուսի Քրիստոսի եղիցի ընդ Ձեզ և ընդ Մեզ, ամեն:

Կաթողիկոս Ամենայն Հայոց՝
ԳԵՎՈՐԳ Ջ